

## ՀԱՅԿ ՀԱԿՈՒՅԱՆ

### ՊԱՏԱՐԱԳ ՊԱՏՎԻՐԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ, ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Պատարագ պատվիրելու առանձնահատկությունները լուսաբանող ամենախոստուն և հավաստի աղբյուրները, վիճաբերից զատ, ձեռագրերն են, ինչպես նաև բանահյուսական և ազգագրական նյութերը<sup>1</sup>: Սույն հոդվածի համար անհրաժեշտ նյութը քաղել ենք հիմնականում ձեռագրերի հիշատակարաններից ու վերոնշյալ աղբյուրներից:

Հայերեն «ժամ» կամ «պատարագ անել» արտահայտությունների իմաստն է «ժամասացություն կատարել, պատարագ մատուցել. ննջեցյալի հիշատակին հոգու հաց տալ. ուտելու համար մաս-մաս բաժանել»<sup>2</sup>, իսկ «հոգու պատարագ»-ը ձեռք է բերել «հոգու հաց» նշանակությունը<sup>3</sup>:

Ըստ «Ազգագրական հանդէս»-ի հատորներում տեղ գտած տվյալների՝ XIX դարի վերջերին և նախորդ դարի սկզբներին հանգուցյալների հիշատակի համար պատարագներ հիմնականում մատուցում էին Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, սակայն, կան նաև բացառություններ: Այսպես՝ Համշենում մեռելի համար պատարագ չէին անում<sup>4</sup>: Ամեն մի տարածաշրջան հանգուցյալի համար տրվելիք պատարագի հարցում ուներ իր առանձնահատկությունը: Գողթան գավառում, օրինակ, եթե ննջեցյալը մանկահասակ էր, անմիջապես կատարում էին թաղման կարգը և տանում գերեզմանատուն, իսկ եթե չափահաս էր, պատարագ էին մատուցում<sup>5</sup>: Գրեթե նույնպիսի սովորույթ կար նաև Բորչալուի գավառում, որտեղ չափահասների համար սովորաբար պատարագ էին մատուցում, իսկ անչափահասներին և մանավանդ աղքատներին՝ թաղում առանց պատարագ մատուցելու<sup>6</sup>: Ինչ վերաբերում է Հայաստանի մյուս շրջաններին, ապա, օրինակ, Նախիջևանում, «... ունևոր մարդիկ սովորութիւն ունին տարին մի անգամ պատարագ անել տալու իւրեանց մեռելներու հոգուն ...»<sup>7</sup>:

<sup>1</sup> Պատարագների փոխհատուցման խնդրի բնութայան անդրադարձել ենք առանձին հոդվածով՝ տե՛ս Հ. Հակոբյան, «Պատարագների փոխհատուցման խնդիրը», *Ակունք*, թիվ 1, Եր., 2014, էջ 60-64:

<sup>2</sup> Ա. Ստեփանյան, Ս. Գալստյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Եր., 1975, էջ 242:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 366:

<sup>4</sup> Յ. Մուրադեանց, «Համշենահայեր», *Ազգագրական հանդէս*, Ե գիրք, Թիֆլիս, 1899, էջ 401-402:

<sup>5</sup> «Գողթան գաւառ», *Ազգագրական հանդէս*, XII գիրք, Թիֆլիս, 1905, էջ 144-145:

<sup>6</sup> Ե. Լալայեան, «Բորչալուի գաւառ», *Ազգագրական հանդէս*, X գիրք, Թիֆլիս, 1903, էջ 170-171:

<sup>7</sup> Եր. Շահազիզ, «Նոր-Նախիջևան», *Ազգագրական հանդէս*, VII և VIII գրքեր, Թիֆլիս, 1901, էջ 102:

Հանգուցյալի համար պատարագ պատվիրելու վերաբերյալ հարուստ և արժեքավոր նյութ կա նաև հայ բանահյուսության մեջ, մասնավորապես՝ «Սասնա ծռեր» էպոսում. այն հավելյալ լույս է սփռում ուսումնասիրվող խնդրի վրա:

Ներկայացնենք մեզ հետաքրքրող վկայությունները. «Դավիթ և Մհեր» պատումում (գրառող՝ Գարեգին սարկավագ Հովսեփյան (հետագայում՝ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա), ասացող՝ Մոկացի Հովհան). Մհերը հիշում է հորեղբորն ու հորը, թաղում է կնոջը և Սասնա տան համար պատարագ է անել տալիս. «... Ելավ, քառսուն պատարագ ետու ինիլ ...»<sup>8</sup>: Այստեղ հստակ երևում է, որ պատարագ կարելի է տալ ոչ միայն կոնկրետ հանգուցյալի, այլև տոհմի համար, իսկ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ էպոսում «Սասնա տուն» արտահայտությունը ունի նաև «Հայոց աշխարհ» իմաստը, կարելի է ենթադրել, որ պատարագ են մատուցել նաև ողջ երկրի բարորության համար: Հայտնի է, որ պատարագից հետո եղել է ավանդական հյուրասիրություն, մասնավորապես մասնակիցները հարիսա են պատրաստել ու պատարագից հետո կերել: Այդ մասին տեղեկություններ ենք գտնում նաև էպոսի պատումներում: «Նախրիչն ըսեց. – Ա՛խպեր, Լսոր մեր գեղ պատարագ ե, Գնա մեր գեղ, հրիսա կի, Առ ընձի հրիսա, արի՛»<sup>9</sup> (1932թ., գրառող՝ Կարապետ Մելիք-Ռհանջանյան, բանասաց՝ Ալաշկերտցի Մանուկ Թորոյան):

Ինչպես հայտնի է վիմագրերից ու ձեռագիր հիշատակարաններից, պատարագ ստանալու համար մարդիկ վճարել են: Այդ մասին տեղեկություններ ենք քաղում նաև «Ազգագրական հանդէս»-ից: Վերջիններս ժամանակային առումով մեզ առավել մոտ են և ավելի ընդգրկուն պատկերացում են տալիս պատարագ պատվիրելու հնավանդ սովորույթի աստիճանական զարգացման մասին: Վարանդայում հոգեհանգստյան ճաշից հետո քահանան օրհնում էր հին ու նոր ննջեցյալներին և ստանում 40 կոպեկից մինչև 1 ռուբլի գումար<sup>10</sup>: Իսկ Զանգեզուրի գավառում կար մի ամբողջ գնացուցակ՝ կապված թաղման ծախսերի հետ: Ստորև ներկայացնում ենք այդ ցուցակը.

«Թաղման ծախսեր. Պատանքի՝ 50 կ. – 1 ռ., Լուսագին եկեղեցուն՝ 50 կ. – 1 ռ., Քահանային՝ մինչև 21 տարեկան – 20 կ. – 1 ռ., աւելի հասակավորի՝ 1 ռ. – 4 ռ., Անբիծքին՝ 40 կ. – 1 ռ., Խաչհամբոյր գանձք ասելիս՝ 50 կ. – 1 ռ., Ժամահացի և եօթնից հացի՝ 30 ռ. – 45 ռ.: Ընդամենը՝ 33,10 – 54 ռ.»<sup>11</sup>:

<sup>8</sup> Սասնա ծռեր, հատոր Ա, Առաջին մաս, խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆ. Կարապետ Մելիք-Ռհանջանյանի, Յեր., 1936, էջ 1240:

<sup>9</sup> Սասնա ծռեր, հատոր Բ, Առաջին մաս, խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆ. Կարապետ Մելիք-Ռհանջանյանի, Յեր., 1944, էջ 66: Հոգեհանգստյան պատարագ տալու մասին տե՛ս նաև Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. IX, N 16. «Անհավատարիմ կնոջ ամոթամբ», Եր., 1968, էջ 124-129, ինչպես նաև՝ հ. IV, N 36. «Սիմոն կուպեցիսի հեքիաթը», Եր., 1963, էջ 320, հ. XVI, N 40. «Մամուկ», Եր., 2009, էջ 258:

<sup>10</sup> Ե. Լալայեան, «Վարանդա», Ազգագրական հանդէս, գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 184:

<sup>11</sup> Ե. Լալայեան, «Զանգեզուր», Ազգագրական հանդէս, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 105:

Գոյութիւնն ունեն նաև այլ գավառների թաղման ծախսերի գնացուցակներ<sup>12</sup> :

*XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին պատարագ պատվիրում էին ոչ միայն հանգուցյալների հիշատակի համար: Երբեմն այն մատուցվում էր նաև մարդկանց մեղքերի թողութեան ու Աստծո զայրույթը «մեղմելու» համար՝ հիվանդութիւնների, եղանակային ու բնական աղետներ դեպքում: Աստծո զայրույթը մարդիկ ընկալում էին որպէս «Յասման ժամ»: Այսպէս՝ Գարեգին Սրվանձտյանցը «Յասման ժամ» արտահայտութեան համար գրում է. «Յերբ տարածամ ձյուն կամ կարկուտ տեղա, բերքերուն վնասե. յերբ մարախն ու թրթուրը բուսն ու կանաչը գոսացնեն. յերբ յերաշտութիւն լինի. յերբ ցավ ու մահ պատահեն մարդոց և անասնոց. յերբ երկրաշարժ լինի, և ինչ վոր պատահի յերկրին, այն՝ վոր մարդոց ըրածը չե, աստուծո ցասումն կը համարին և այդ ցասման դեմն առնելու համար սնահավատ մարդիկ ամբողջ հասարակութեամբ մատաղ էյին մորթում և ժամ անում: Յեփում էյին «ցասման ճաշ»՝ հաճախ հարիսա, հանում, դնում կալը, կամ հենց բացոթեցա յեփում, և «ժամ ու պատարագից» հետո ուտում էյին այդ հասարակական մատաղը: Այս սովորութիւնը գալիս է խոր հնութիւնից. նույնիսկ քրիստոնէութիւնից առաջ, դա կատարվել է շատ ազգերի կրօն ու հավատքի, կյանք ու կենցաղի մեջ»<sup>13</sup> : Աստծո զայրույթը կամ ցասման ժամը մեղմելու մասին վկայութիւն կա նաև էպոսի պատումներում. «Մեկ որ լե ելավ առավոտուն Դավիթ, քշեց հորթեր, գնաց, տեսավ, որ տղա չկա, հորթեր չկա: Եդ տղայի գեղ լե ցավ, հիվանդութիւն շատ կըլնի: Եդ գեղացիք լե պատարագ կենին, աղաչանք կենին, որ Աստված փարատութիւն տա»<sup>14</sup> : Բնական է, որ իրենց մեղքերով էին հավատացյալները «արժանանում» Տիրոջ զայրույթին, ուստի մեղքերը քավելու համար պատարագ պատվիրելն անխուսափելի էր<sup>15</sup> :*

Նմանօրինակ վկայութիւն է պարունակում նաև Մոկսում գրառված «Սըլտան Փարիշան» հեքիաթի հետևյալ հատվածը. «Կըսը. — Մըկա ըստա մընակ կաթիլ էլներ, թղիս կաթեր, մըկա ըստա մընակ մութ էլներ, թըրիս մութ էլներ, լա

<sup>12</sup> Ե. Լալայեան, «Սիսիան», Ազգագրական հանդէս, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 248, «Բուլանըխ կամ Հարֆ գաւառ», Ազգագրական հանդէս, գիրք Ե, էջ 181:

<sup>13</sup> Սասնա ծոեր, Բ հատոր, մասն յերկրորդ, խմբագրեց ակադեմիկոս Մ. Աբեղյան, աշխատակցութեամբ պրոֆ. Կարապետ Մելիք-Ոհանջանյանի, Յեր., 1951, էջ 875: Յասման ժամի վերաբերյալ հիշատակություն կա նաև «Սասնա ծոեր» էպոսի տարբեր պատումներում. «Որեւոց մեկ ուր ընկեր անգրցավ. Դավիթ շատ վիրավորավ: Ըդ տղեն լե, մ ասի, ըդոնց գեղ ցասման ժամ է, պատարագ է, Տղեն եդ ապով անգցեր եկավ» («Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», 1873 թ., ասացող՝ Տարոնցի Կրպո, գրառող՝ Գարեգին Սրվանձտյան, Սասնա ծոեր, Բ հատոր, մասն յերկրորդ, էջ 21):

<sup>14</sup> Սասնա ծոեր, Բ հատոր, մասն յերկրորդ, էջ 575-576:

<sup>15</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Հակոբյան, «Մեղքերի թողության երևույթի մի առանձնահատկություն միջնադարյան աղբյուրներում», Ակունք, թիվ 1, Եր., 2014, էջ 51-59:

Միրզամահմատ խուրդուտ, արիվուտ մեռնիմ, կը տանիս, ժամ էլ արա ձի (ընդգծումը մերն է Հ. Հ.), նա կաթիլք թըխ կըտըր: Նուր Միրզամահմատ ժամ արավ մոր խամար, անու կաթիլք փըշում կըտըրավ»<sup>16</sup>: Այս հեքիաթում հանգուցյալ մայրը խնդրում է որդուն, որ իր համար պատարագ անի, որպեսզի իր գլխին թափվող կաթիլը կտրվի: Որդին՝ Միրզամահմատը, պատարագ է անում մոր համար, որից հետո կաթիլները սակավ ինչ մեղմվում են:

Ինչպես վերը նշեցինք, պատարագ պատվիրելու շարժառիթները տարբեր էին. պատարագներ էին մատուցում ինչպես հարսանիքի<sup>17</sup>, այնպես էլ թշնամիների դեմ հաղթանակն ապահովելու համար: Նման հիշատակումներով հարուստ է հատկապես «Սասնա ծռեր» էպոսը: Նրա տարբերակներից մեկում եպիսկոպոս քեռին, այսինքն՝ Աստծո ու մարդկանց միջև միջնորդը, գնում է Աղթամար ժամ-պատարագ է անում, օրհնում է երկու թուր, տալիս Սանասարին ու Բաղդասարին, ու նրանք այդ թրով հաղթում են թշնամիներին. «Գրնաց Հախթամար, ժամ-պատարաք երաց, երկու թուր ոխնեց, Մածուկ հերողկեց Սանասար, Բաղդասարին, Տրին ուրենց շաղրի տակ, պախեցին»<sup>18</sup>: Նման է էպոսի մեկ այլ պատումում հանդիպող՝ Երուսաղեմի թագավորի ու իր վեզիրի դրվագին. «Վերցուց թագավոր որ վեզիրին ըսեց. Մեր թագավորություն իսկի մեկ թագավորուտեն ի շե: - Ըբա, ըսեց, ի՞նչ ենինք վազիր: - Յետ դառնանք, նստինք մեր թախտի վրեն: Ու սկսեցին խեր ու խերյաթ ենել ու պատարագ ենել: Պատարագն որ երեցին, պրծան, Հրեշտակներ սրով, թրով իջան Սենեքերիմի ասքարի մեջ. Ու ջարդեցին ու սպանեցին, ու կոտորեցին»<sup>19</sup> (ասացող՝ Ապարանցի Մուրադ): Հատկանշական է նաև հետևյալ պատմությունը, ըստ որի՝ պատարագից հետո Աստծո հրեշտակները անձամբ են թշնամու հետ կռվում ու փրկում Երուսաղեմի վանքում պատսպարված հավատացյալներին. «Սենեքերիմ թաքավոր յոթ տարի կռիվ երեց: Ձեզ քրիստոնեք յախթեց, Տարավ, լցեց Յերուսաղեմա վանքի մեջ: ... Եդ յիրիգուն վարդապետ ըսեց. — Ժողովու՛րդ, եգե՛ք պաղարաք ենինք, ... Վարդապետ յելավ, պաղարաք երեց, Եդոնք Աստված աղաղագ երին, Լացին, յխպացին, մինչի աղոթրընի դեմ: Հրեղեն սուր Ասծուց եր, Յընգավ եդ զորքի մեջ...»<sup>20</sup>:

<sup>16</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XVII, հատորը կազմեց, առաջաբանը գրեց և տպագրության պատրաստեց Թ. Հայրապետյանը, N 29, էջ 389-390. «Արլտան Փարիջան», Եր., 2012: «Փափավոր գողացող տղան» հեքիաթում թագավորը, իմանալով, որ պետք է մահանա, նախապես հոգեհաց ու պատարագ է տալիս (տե՛ս Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. I, հատորը պատրաստեց և առաջաբանը գրեց Ա. Նազինյանը, N 41, Եր., 1967, էջ 512-514):

<sup>17</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XIV, հատորը կազմեց և տպագրության պատրաստեց Ա. Ղազիյանը, N 2, «Գոլ Բարին», Եր., 1999, էջ 40-55:

<sup>18</sup> Սասնա ծռեր, հ. Ա, Առաջին մաս, էջ 880:

<sup>19</sup> Նույն տեղում, հ. Բ, Առաջին մաս, էջ 50:

<sup>20</sup> Նույն տեղում, հ. Բ, Առաջին մաս, էջ 255-256:

Այսպիսով ըստ բանահյուսական ու ազգագրական աղբյուրների՝ պատարագ պատվիրում էին հետևյալ դրդապատճառներով. հանգուցյալի հիշատակի համար, սակավադեպ՝ հարսանիքի ժամանակ<sup>21</sup>: Այն կարելի էր մատուցել ողջ երկրի բարգավաճման, ինչպես նաև մարդկանց մեղքերի թողության ու Աստծո զայրույթը կամ «Յասման ժամը» մեղմելու համար: Պատարագ մատուցելը հաճախ թշնամու դեմ հաղթանակ ապահովելու միջոց էր: Որոշ պատճառների, օրինակ՝ «Յասման ժամ»-ի, դերը դիպվածային էր, քանի որ բնական աղետները հաճախադեպ չեն, իսկ մեղքերի թողության դեպքում պատվիրվող պատարագների բնույթը կանոնավոր էր:

Ինչպես արդեն նշվեց, նվիրատու-հավատացյալների պատարագ ստանալու փաստեր կան նաև ձեռագրերի հիշատակարաններում: Օրինակ, ձեռագրի նվիրատուն անում էր դա, պատարագ ստանալու ակնկալիքով: Նման հիշատակություններ կան նաև վիճագրերում: Նվիրատուները հիշատակարաններում հաճախ նշում են, որ նվիրել են ձեռագիր-մատյան, առավել հաճախ Ավետարան (չէ՞ որ ժողովրդի մեջ Աստվածաշունչը տարածված էր առավելագույնս Նոր կտակարանի կամ Ավետարանի տեսքով<sup>22</sup>) ու ստացել որոշակի թվով պատարագներ: Օրինակ. «... ի թուիս ԶԼԶ. (1287 թ.), ի տան վարդավառին եկին ի յուխտ ի Սուրբ Լուսաւորչիս ... Մեծտիկին ... եւ որդին նորին Ապուլքարամ ... եւ տունին զգեղեցկազարդ Աւետարանս ընծայք ... եւ ... միաբանքս տուաք ի տարին աւր մի պատարագ ... ի տանի սուրբ քառասնիցն ...»<sup>23</sup>: Ինչպես նկատում ենք, պատարագը պատվիրված է Վարդավառի կամ Տիրոջ Պայծառակերպության տոնի համար, որի ժամանակ պատարագ պատվիրելը հատկապես զանգվածային բնույթ ուներ:

Հավատացյալ հայորդիները, բացի Ավետարաններից, նվիրել են նաև ճաշոցներ: Այսպես, Դանիել կրոնավորը Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցուն նվիրել է «Ճաշոց» ու ստացել Վարդավառի ու Աստվածածնի տոներին տարեկան երկու պատարագ. «... ի թուիս ԶԿԱ. (1312) սրբազան, կրանաւորն Դանիէլ ետ գտարեգիրքս սուրբ Խաչիս Ախթամարայ, յիշատակ հոգոյ իւրոց ...: Եւ սպասաւորք սուրբ Խաչիս յանձն առին, որ յամէն տարի Բ (2) ժամ առնեն՝ Շահապին, և մէկն մաւրն՝ Թամարին, և յետ իւրեանց մահուն, զմէկ ժամն՝ վարդավառի կիրակին՝ Դանիէլին առնեն, և զմէկն՝ Աստուածածնի կիրակին՝ Մարիանոյն ...»<sup>24</sup> կամ հետևյալ հիշատակարանինը. «... ի թվիս ԶԿԷ. (1318), ի մեհեկի ամիսն, ի գեղս Աստապար ... Ես՝ մեղուցեալ ծառայս Աստուծոյ Սիմոն

<sup>21</sup> Օրինակ՝ «Նոր քաղաղան յոթն օր, յոթ կիշեր թոփով, թվանփյով, սագով-փյամանչով, նաղաւ-զուտնով, ժամ-պատարափյով խարսնիս արիցին», տե՛ս Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XIV, №2. «Գոլ-Բարին», էջ 55:

<sup>22</sup> Ա. Լապ. Ժամկոչյան, Աստվածաշունչը և հայ բանավոր ավանդույթը, Եր., 2012, էջ 51:

<sup>23</sup> Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Եր., 1984, էջ 603:

<sup>24</sup> Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 86:

աբեղա, որդի Յոհանիսի, ... ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց, ի յիշատակութիւն ինձ և ծնաւղաց իմոց, և ընծայեցի ի Սուրբ Նախավկայն, որ յորժամ զգիրքս վճարեն ի սուրբ աւր պենդակոստէին, ի գալուստ Հոգոյն Սրբոյ ի վերնատունն...»<sup>25</sup> :

Հիշատակարաններում կան նաև պատարագ ստանալու ակնկալիքով վանքին շուրջառներ նվիրելու վկայություններ. «...Ես՝ ծառայս Աստուծոյ Խաղուպս և Մեծխաթունս, որ ի մեր հալալ արդեանցն տվաք յիշատակ ի սուրբ Ամենափրկիչն շուրջառ մի ծիրանի խաւուն, որ քահանա ... յամենայն տարի Գ. (4) պատարագ առնէ ... ի թվ. 222 (1336 թ.)»<sup>26</sup> : Հիշատակարաններում էլ, ինչպես և վիճաբերում, պատարագ պատվիրելու կոնկրետ գին սովորաբար չի նշվում. այլապես այդ գումարը բաժանելով պատվիրված պատարագների քանակին՝ հնարավոր կլինէր որոշել մեկ պատարագի գինը: Ավետարանի գնի մասին հարյուր դահեկան, հստակ խոսող մի բացառիկ հիշատակարան է 1292 թվականի այս վկայագիրը. «... Ես նուստ ոգի Գալիթ վարդապետ Տաթևացի, ... ստացայ զսուրբ Աւետարանս ի ... հարիւր դահեկան ...»<sup>27</sup> : XIV դարի մեկ այլ հիշատակարանում Ավետարանի գինը «հարյուր սպիտակ» է. «... Ես՝ աղախին և ծառայ տեառն Աստուծոյ Սուզայ, աւգնական եղէ ի գին սուրբ աւետարանիս Ճ. (100) սպիտակ, և խնդրեցի, զի յամենայն ամի Ա. (1) աւր պատարագաւ յիշեսցէ զիս Տէրունական ///»<sup>28</sup> :

Սկսած XIV-XV դարերից, երբ Հայաստանը ենթարկվում է մոտ և հեռու վաչկատունների հարձակումներին, եկեղեցիները նույնպես սկսում են թալանվել: Եկեղեցական սրբազան սպասքի հետ մեկտեղ գողանում էին նաև ծիսական գրքեր՝ Ավետարաններ, Մաշտոցներ, Ճաշոցներ և այլն: Դրանց առևանգումը հաճախ որակել են որպես «գերեվարություն»<sup>29</sup> : Զեռագրեր «գերեվարելու» դեպքեր արձանագրված են նաև հետագա դարերում: Օրինակ, մեջբերենք XIV դարի մի հիշատակարանից. «... Ի թվ. Հայոց 222 գողացան զսուրբ Աւետարանս ի սուրբ Կարայպետէս և տարան ի գեղն, որ կոչի Լուսորմ: Զոր տեսեալ պատուական քահ[անայն] Կիրակոս, և գնեց զսայ ի յարդար ընչից իւրոց, և ետ վերստին ի սուրբ Կարապետս, ի յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց:... Ես՝ Ստեփանոս հայրպետս, ու այլ միաբանք, որ

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 148:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 299:

<sup>27</sup> Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 685:

<sup>28</sup> Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 67:

<sup>29</sup> Հաճախ ավետարանները նույնիսկ երազներում հայտնվել են, խնդրել ու հրահանգել են իրենց ազատել կամ փրկագնել՝ նույնիսկ սպառնալով. « «Ննամի Զարդարը» հիշում է, թե «Օսկե կող ու Կարմիր Ավետարանները տերտերներուն էրազ կուզան թե՛ մեզի մեր տեղը — մեր օրևանը տարեմ, թե չէ աչերդ կը համենմ», տե՛ս Ն. Մարտիրոսյան, «Տան սուրբ» երևույթը. Ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 339:

ուխտեցաք ի սուրբ Կարապետս, որ յամէն տարի ի սուրբ Կարապետի տաւնին զպատարագն իւրենց առնենք»<sup>30</sup>, կամ 15-րդ դարի հետեւյալ վկայագրից. «... Թուվ[ականին] Հայոց Ջժէ. (1468), զի գողացան զԱւետարանս և տարան յԵրզնկայն: ... Ես՝ Առաքել քահանայս, ... դարձուցի ի գերութենէ զսուրբ Աւետարանս և բերի յիմ բնիկ գեղն՝ ի Թացու: ... Ե. (5) տարի յայլոց ձեռն եկաց: Շատ լալով ու դառնութեամբ շուրջ եկի հետ Աւետարանիս, է. (7) ամիս ի դուս կացի՝ ապա գտի [Մ. (200) կարմիր գին տուի]»<sup>31</sup>:

Հաճախ ձեռագիրը գերությունից ազատելը կամ ետ գնելը անվանվել է «թափել»։ «Ես՝ նուաստ Մշեցի Դաւիթ ... յիշեցի թէ՛ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, և ընտանեաց նորա յԵրուսաղէմ, և իմ հալալ արդեանց տվի Մ. (200) դեկան, և թափեցի զսուրբ աւետարանս, և դարձուցի ի ս. Կարապետ ...: ... Ի թվ. Հայոց ՊԾէ. (1408), որ թափեցի»<sup>32</sup>: Ձեռագիրը գերությունից ազատելու համար վճարել են, ու թեպետ հաճախ ըստ հիշատակարանների հավատացյալը որոշակի փրկագնով գերությունից ազատում է ձեռագիրը՝ սովորաբար Ավետարանը, նա դրա դիմաց պատարագ չի ստանում<sup>33</sup>, ինչպես օրինակ՝ հետեւյալ հիշատակարանում. «... խոշա Գորգ ... ազատեցին ի գերութենէ զսուրբ աւետարանս ...: Եւ ետուն ի գին նորա Ռեճ. (1500) դր[ամ] մերտնցի»: ՊՀԳ. (1424)»<sup>34</sup>:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 356:

<sup>31</sup> Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ժե դարի, մասն երկրորդ՝ 1451-1480 թթ., Եր., 1958, էջ 277:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 277:

<sup>33</sup> Տե՛ս նաև Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., մասն առաջին՝ 1401-1450 թթ., էջ 83. «... Արդ, ես՝ Դաւիթս գնեցի զսուրբ աւետարանս ի հազար և ի հարիւր դրամ, ... ի թվ. ՊԾԶ. (1407) ...», էջ 131. «... զՍարգիս արեղայս, որ գնեցի զսուրբ աւետարանս ... Ներսէս իրիցոյ՝ որդոյ Սարգսէն ճ. (100) թանկայ...»: Մրա պապը՝ Էրեգին, 1382 թվականին, տեսնելով ավետարանը «ի ձեռն այլաստից ի գերութիւն», գնել էր այն՝ վնարելով 100 դանեկան: «... Մարտիրոս՝ Աբրայիմովու որդի, ... աւետարանս ծախեցի Յակոբ քահանային՝ Ռ. (600) դանեկան...: ... ի թվ. Պ[Կ]Բ. (1413)» (նույն տեղում, էջ 161): Ժե դարի 2-րդ կեսի հիշատակարանից՝ «... Ես՝ խոշայ Ջանգիշա, ստացայ և գնեցի զսուրբ աւետարանս ... ի ճԶ. (180) շախտովսի ...»: (նույն տեղում, էջ 228): Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., մասն երկրորդ՝ 1451-1480 թթ., էջ 49. Աւետարան. «... Ես՝ մղտեսի Կիրակոսս, որդի մղտեսի Պեհնամին, վաղֆ արի իմ ամէն ազգիս վերայ ...: Ի յոր տեղ որ կենայ, նա աագ հինգշաբթին ատուրն զպատարագն մեր ննջեցելոցն մատուցանեն. և իմամ տանաղին զաւրհնութիւն ի սուրն Աւետարանէս առնուն: Ի թվին Հայոց ՋԳ. (1454), նոյեմբեր ԺԱ. (11) ...», էջ 252-253. «... Ի թվականութեան Հայոց ՋԺե. (1466)- ին, ի հայրապետութեան տեսոն Ըոքստակէսի, ... ես Յովաննէս՝ որդի պարոն Մանուկին, գնեցի զսուրբ Աւետարանս ի Յովաննէս իրիցուէ, ... Ռեճ. (1200) սպ[իտակ] ...»: «... սբ. Աւետարանս անարժան էրէցս Ջուղայեցի, ... առաքեցի զսա ի յերկիրն Վասպուրական, ... մոտ ի վարդապետն Ստեփանոս, ի յանապատն Լիմ, ... և նա տուեալ զգին սորա Ծե. (55) դոռոյ ...» (Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Հայերեն ձեռագրերի ժե դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), Բ հատոր, Եր., 1978, էջ 633):

<sup>34</sup> Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., մասն երկրորդ՝ 1451-1480 թթ., էջ 89:

Ձեռագրերում պատարագ խնդրելու մեզ հանդիպած ամենաուշ վկայություններից մեկը պահպանվել է Շատախ գավառի Հակե վանքում գրված ՄՄ 5457 Ավետարանի հիշատակարանում (թթ. 273ա (274բ)– 276ա): Հիշատակարանը բերում ենք ամբողջությամբ, քանի որ այն առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում. «(273ա-274բ)... Ամէնաւրհնեալ եւ հոգիացեալն ի գործս բարեաց, բարեսէր եւ հաւատարիմ եւ աստուածապաշտ եւ երկիրդած յԱստուծոյ քահանայապետն եւ սրբասէր եպիսկոպոսապետն Սիրապիոն, որ ըստացաւ զանառիկ // (275ա) մեծութիւնս եւ զըփարթամ հարբատութիւնս ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ բարեպաշտ ծնաց (այսպէս) իւրոց հաւրն՝ Հայրֆին<sup>35</sup>, մաւրն Մեղուշին<sup>36</sup> եւ քրւերն՝ Խազրավարդին<sup>37</sup> (սակավաղեպ հանդիպող անձնանուններ են. ընդգծումը մերն է՝ Հ. Հ.) եւ հաւր եղբարց Յովսէփին, Մարտիրոսին, Կիրակոսին, հօրքորոջ՝ Մարեմին, Մրուաթին, Դօլաթին, Շնախորին եւ այլ արեան ամենայն մերձաւորաց իմոց կենդանեաց եւ հանգուցելոցն առ հասարակ ողորմի Քրիստոս Աստուած. Ամէն: Եւս առաւել ի ժամ սուրբ եւ սոսկալի հաշտարար եւ մեղսաքաւիչք պատարագին յիշել զմեզ ցերմեռանդ սիրով առաջի (ընդգծումը մերն է՝ Հ. Հ.) զենլոյն Քրիստոսի, զի եւ զձեզ յիշեսցէ Քրիստոս յարքայութեան իւրում. Ամէն: Եւ արդ, ես ունայնս եւ հաշեալս եւ մաշեալս, անգէտս, ի գիտնաւորացդ անկարգս ի կարգաւորացդ, անարհեստ եւ ամարածիւ եւ ներգեւեալ եւ իմ անընդունակ գոլով յանձն առի Սրապիոն կրանաւոր, որ ան/(275բ)ուամբս եմ եւ գործովս ոչ, տեսի զըսէր եւ զփափաք բարեսէր քահանայապետն Սրապիոն եւ իմովս յիմարութեամբս կատարեցի հոգւոյ յիշատակ Սրապիոն եպիսկոպոսին եւ ծնաւղացն նորին, հաւրն՝ Խայրֆին եւ մաւրն Մեղուշին եւ քորոջն՝ Խազրավարդին, եւ հաւրեղբարցն՝ Յովսէփին, Մարտիրոսին, Կիրակոսին եւ հօրքորոջը՝ Մարեմին, Մրուաթին, Դովլաթին, Շնահորին եւ Աստուած ողորմի ասացէք նոցա. Ամէն: Արդ, զրեցաւ Սուրբ Աւետարանս այս ի յերկիրն Շատխոյ, ի վանքն Յակէոյ, ի դուռն Սուրբ Սարգսի Զաւրավարին, ի հէրպետութիւն Սիրապիոն եպիսկոպոսին, ի հայրապետութիւն սուրբ աթոռոյն փոքր Գրիգորիսի, ի թուականիս մերոյ ՌԽԵ (1596) ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ այլազգիքն զօրացեալ են ի վերա քրիստոնէիցս հարկապահանջութիւն անհուն է եւ անհամար փախըստական յաշ// (276ա)խարհէ յաշխարհ...»:

<sup>35</sup> «Խայրֆայ» բառի ձևափոխված տարբերակն է: Քրիստոնյաների համար նշանակում է «վարդապետ, թեմական առաջնորդ»: Տե՛ս Հր. Աճառյան, *Հայոց Անձնանունների Բառարան*, հատոր 2, եր., 1944, էջ 454:

<sup>36</sup> «Մեղր» բառից շինված փաղափշական ու հազվադեպ հանդիպվող անուն: Տե՛ս Հր. Աճառյան, *Հայոց Անձնանունների Բառարան*, հատոր 3, եր., 1946, էջ 315:

<sup>37</sup> Հազարվարդ անվան բառբառային ձևն է, որը նշանակում է «հազար թերթերով վարդ»: Գործածվել է XIII դարից սկսած: Տե՛ս նույն տեղում, էջ 11:



Ամփոփենք. պատարագ ստանալու համար վանքերին ու եկեղեցիներին են նվիրաբերվել Ավետարաններ, ճաշոցներ, շուրջառներ, եկեղեցական սպասք և այլն<sup>38</sup>: Իսկ գերեվարված Ավետարանները, այլ ձեռագրեր ու սպասք վերադարձնելու համար անձը կարող էր պարգևատրվել պատարագով: Ուշ շրջանում սրբազան գրքերը սերնդեսերունդ պահելը, «գերեվարվելու» դեպքում նույնիսկ ողջ գյուղերով գումար հավաքելը՝ Ավետարանը «փրկագնելու» համար, պայմանավորված էր, թերևս, այդ Ավետարանների «Տան սուրբ» Ավետարան լինելու հանգամանքով<sup>39</sup>:

Айк Акобян

**Особенности заказа литургии по фольклорным, этнографическим и литературным источникам  
Резюме**

Самым надежным источником изучения особенностей заказа божественной литургии, помимо эпиграфического материала, являются колофоны рукописей, а также фольклорные и этнографические материалы. Поводом для заказа литургии, согласно фольклорным и этнографическим источникам, могли явиться нижеследующие мотивы: литургию совершали в память о погибших, иногда по поводу свадьбы. Ее можно было совершить и для достижения процветания всей страны, а также ради прощения грехов, для смягчения Божьего гнева или «Часа ярости». Литургия часто совершалась с целью достижения победы над врагами. Чтобы заслужить литургию, монастырям и церквам дарили Евангелия, Лекционарии (Ճաշոց), ризы, церковную утварь и т.д. А наградой за возвращение «пленных» Евангелий, других рукописей и церковной утвари была литургия.

<sup>38</sup> Պատարագ պատվիրելու մասին բազում են նաև մատենագրական տվյալները, մասնավորապես՝ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի մէջ կա ֆննարկվող խնդրին առնչվող շատ կարևոր մի տեղեկություն, որտեղ խոսվում է Կիլիկիայի թագավոր Լևոն Գ-ի՝ Տաթևի վանքից պատարագ ստանալու մասին. «Յաղագս այս յուայ և սիրոյ աստուածագոր թագաւորին եղբայրութեամբս կարգեցաւ զօր սրբոյ Զատկի Յարութեան միաշարքուն յիշատակ նմա, որ կատարեն զպատարագն յամենայն եկեղեցիս անխափան մինչ ի վախճան», տես Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1912, էջ 436:

<sup>39</sup> Հ. Մարտիրոսյան, «Տան սուրբ» երևույթը. Ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները, էջ 343-344:

**Hayk Hakobian**  
**Ordering liturgy according to folklore, ethnographic and  
literary sources**  
**Summary**

The most reliable sources for studying the specifics of ordering Divine Liturgy, alongside with epigraphic materials, are manuscript colophons, as well as folklore and ethnographic materials. According to folklore and ethnographic sources, Liturgy could be ordered for the commemoration of the dead, rarely on the occasion of weddings. It could also be offered for the prosperity of the whole country, as well as for receiving absolution and for the mollification the wrath of God or the “Hour of fury.” Often Liturgy was a means for defeating the enemy. Gospel, Lectionaries, liturgical vestments, church utensils, etc. were presented to monasteries and churches in order to deserve liturgy. And conversely, the return of the “captive” Gospels, other manuscripts and church utensils was rewarded with Liturgy.